

ՖԻԼԻՓ ԱՂԱԶԱՐԵԱՆԻ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍԸ

Ապրիլ 6ին Ֆիլիփ Աղազարեանի տուած նուագահանդէսին վրայ, ըլ Մենեսթրել երա-
ժշտական ծանօթ շաքաքաքերին մէջ, ժօրժ
Պօտէն կը գրէ հետեւեալը.

Հայազգի վերթիւօղ ջութակահար Ֆիլիփ
Աղազարեան յայտագիր մը յօրինած էր ուրիշ
արտաքսուած էր ահէն ձանձրացուցիչ զործ :
De Feschի մէկ Սօնաքը, Corelliի Ֆօլիան,
Bachի Կալօթն ու Միւզէքը, Destouchesի
Փասփիէն, Gossecի Թամպուրէնը, Moussorgs-
kyի Կօփաքը՝ Աղազարեանի գիւթիչ Հայկական
մեղեդիովն ամբողջացած՝ առաջին մասը կը
կազմէին :

Արդի երաժշտութենէն մեկի հրամցուած
տակուն կտորը եղաւ Antonio Torrandellի
դեղեցիկ Սօնաքին Մաժօրփինը որ խանդա-
վառ յաջողութիւն մը դտաւ :

Վերջին մասը կը պարունակէր Kreislerի
Dvorakէ ու Paganiniէ բրած նուագափոխու-
թիւնները, Henri Colletի լա փէմին Աղազար-
եանի բրած նուագափոխութիւնը, ևև Sarasateի
անուանի Պոհեմիական եղանակները :

Աղազարեան վերթիւօղ մըն է որուն անդու-
շական երաժշտականութիւնը կը համաձայնի
կախարդական մեքենականութեան մը հետ :

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԸ ՓԱՌԱՐԱՆՈՒԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Այս տարւան Մարտի վերջերը, Երեւան,
կուրտուրայի Տան մէջ, տեղի ունեցած է երե-
կոյթ մը, նուիրուած բանաստեղծ Յովհ. Թու-
մանեանի մահուան տասնամեակին : Թուման-
եանի յիշատակը յաւերժացնելու համար, Լու-
սաւորութեան գործադարութիւնը որոշած է

Լոսիի Դսեղ զիւղին մէջ (որ ծնած է բանաս-
տեղծը) հիմնել Եօթնամեայ վարժարան մը՝
Թումանեանի անունով, ինչպէս ևև գործադար-
ներու Խորհուրդէն խնդրել որ Լոսիի մէջ կա-
ռուցուի՝ Թումանեանի անունով՝ հանդստեան
տուն մը Հայաստանի գրողներուն համար :
Հրահանգ տրուած է Պետական Հրատարակչա-
կանին այս տարի ի լոյս բնծայել Թումանեանի
երկերու ամբողջական հաւաքածուն (խմբադ-
րութեամբ Չարենցի ևև Օր. Նուարդ Թուման-
եանի), ևև հրատարակել Անուշ վրայերի վրայ
Արմէն Տիգրանեանի տարիներ առաջ յօրինած
(ու վերջերս վերամշակած ու բնդրայնած)
օփերան : Գարձեալ՝ որոշուած է Երեւանի ման-
կավարժական Համալսարանին մէջ պահել Թու-
մանեանի անունով երեք ուսանող, ու խնդրել
Երեւանի Քաղաքային Խորհուրդէն, որ փողոց-
ներէն մէկուն Թումանեանի անունը տայ :

Ապրիլ 2ին, Թիֆլիսի մէջ տեղի ունեցած
է, Վրաստանի Գրողներու Միութեան նախա-
ձեռնութեամբ, հանդէս մը Թումանեանի յիշա-
տակին նուիրուած Ներկայ կղած է խուսն բաղ-
մութիւն մը, մեծ մասամբ հայ ու վրացի ու-
սանողներէ բաղկացած : Խօսք առած ևև երե-
կոյթին նախագահը, վրացի բանաստեղծ Սան-
տրօ Եուլին, Վրաստանի Գրողներու Միութեան
քարտուղար Փէսօ Ժղենտունի, որ շեշտած է
իւր Թումանեան, իր բանաստեղծ ևև քաղաքա-
ցի, Կովկասի բոլոր աղբերուն կը պատկանի,
Աղասի Վարդանեան, որ Թումանեանը բնորոշած
է իրը հայ չքաւոր զիւղացիի կենցաղին ամե-
նէն տաղանդաւոր արտայայտողը, բանաստեղծ
Տարիցէ, որ յուշեր պատմած է Թումանեանի
կեանքէն. բանաստեղծ Գրիշաշվիլի կարդացած
է Թումանեանէն երեք կտոր՝ իր կողմէ վրա-
ցերէնի թարգմանուած, յետոյ գործադրուած
է հանդէսի յայտադրին զրական - երաժշտա-
կան մասը՝ ամբողջապէս կազմուած Թումանեա-
նի երկերէն :

Բանաստեղծ Տարիցէ առաջարկած է Թիֆ-
լիսի մէջ կանգնել Յովհաննէս Թումանեանի
արձանը :